Կանխավճար

Այն դեպքերում, երբ վաճառված ապրանքի կամ մատուցված ծառայության դիմաց վճարումը կատարվում է նախօրոք, նոր սերնդի հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող հարկ վճարողները կարող են օգտագործել «Կանխավճար»-ի կտրոնի տպագրման և «Կանխավճարի օգտագործում» գործառույթները:

Գործընթացն իրականացվում է ստորև ներկայացված քայլերի հաջորդականությամբ՝

1. Գումարը վճարելու պահին տրամադրվում է «Կանխավճար» գրառումով կտրոն:
2. Ապրանքի փաստացի վաճառքի կամ ծառայության փաստացի մատուցման ժամանակ ՀԴՄ կտրոնի համար նախատեսված դաշտերի տվյալները լրացնելիս գումարի այն մասը, որը վճարվել էր նախօրոք, նշվում է «Կանխավճարի օգտագործում» դաշտում:
3. Տպագրվում է ՀԴՄ կտրոն՝ վերոնշյալ տվյալների վերաբերյալ գրառմամբ:

Հետվճար

Այն դեպքերում, երբ վաճառված ապրանքի կամ մատուցված ծառայության դիմաց տվյալ պահին վճարում չի կատարվում, այլ գումարը վճարվում է հետագայում կամ տարաժամկետ, նոր սերնդի հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող հարկ վճարողները կարող են օգտագործել «Կանխավճար»-ի կտրոնի տպագրման և «Կանխավճարի օգտագործում» գործառույթները:

Գործընթացն իրականացվում է ստորև ներկայացված քայլերի հաջորդականությամբ՝

1. Ապրանքի փաստացի վաճառքի կամ ծառայության փաստացի մատուցման ժամանակ տրամադրվում է ՀԴՄ կտրոն:
2. ՀԴՄ կտրոնի համար նախատեսված դաշտերի տվյալները լրացնելիս գումարի այն մասը, որը վճարվելու է հետագայում, լրացվում է «Կանխավճարի օգտագործում» դաշտում:
3. Գումարը վճարելու պահին տրամադրվում է «Կանխավճար» գրառումով կտրոն:

Մասնակի վճարում

Այն դեպքերում, երբ վաճառված ապրանքի կամ մատուցված ծառայության դիմաց վճարվող գումարի մի մասը վճարվում է այլ հարկ վճարողի՝ մասնավորապես ապահովագրական ընկերության կամ բանկի կողմից, նոր սերնդի հսկիչ դրամարկղային մեքենաներ կիրառող հարկ վճարողները կարող են օգտագործել ՀԴՄ-ի «Մասնակի վճարում» գործառույթը:

Գործընթացն իրականացվում է ստորև ներկայացված քայլերի հաջորդականությամբ՝

1. Կտրոնի տպագրման համար նախատեսված դաշտերի տվյալները լրացնելիս վաճառված ապրանքի կամ մատուցված ծառայության դիմաց հաճախորդի կողմից վճարվելիք գումարը նշվում է «Առձեռն», «Անկանխիկ» կամ «Կանխավճարի օգտագործում» դաշտերում՝ կախված վճարման եղանակից:
2. Վաճառված ապրանքի կամ մատուցված ծառայության դիմաց այլ հարկ վճարողի կողմից վճարվելիք գումարի չափը նշվում է «Փոխհատուցման գումար» դաշտում:

Տպագրվում է ՀԴՄ կտրոն՝ վերոնշյալ տվյալների վերաբերյալ գրառմամբ: